Հայտարարություն

Վաղարշապատի համայնքապետարանի թիվ 5 «Գարուն» մանկապարտեզ ՀՈԱԿ-ը հայտարարում է մրցույթ հետևյալ մանկավարժական աշխատողների ընտրության համար.

Տնօրենի ուսումնական գծով տեղակալ՝ մեթոդիստ 1 դրույքաչափ,

Դաստիարակ՝ 1,17 դրույքաչափ։

Մրցույթն անցկացվելու է երկու փուլով՝ թեստավորման և հարցազրույցի։ Թեստավորման փուլն անցկացվելու է ըստ ՀՀ ԿԳՄՄՆ մշակած հարցաշարի, իսկ հարցազրույցը՝ հաստատության կազմած հարցաշարով։ Յուրաքանչյուր մասնակցի հետ հարցազրույցն անցկացվում է առանձին։

Տնօրենի ուսումնական գծով տեղակալի՝ մեթոդիստի որակավորման պահանջներն են՝ բարձրագույն մանկավարժական կրթություն և վերջին տասը տարվա ընթացքում նախադպրոցական կրթության ոլորտի աշխատանքի առնվազն երեք տարվա մանկավարժական գործունեության ստաժ։

Դաստիարակի որակավորման պահանջներն են՝ միջին կամ բարձրագույն մասնագիտական կրթություն համապատասխան որակավորմամբ կամ միջին կամ բարձրագույն մանկավարժական կրթություն և վերջին տասը տարվա ընթացքում նախադպրոցական կրթության ոլորտում առնվազն երեք տարվա մանկավարժական գործունեության ստաժ կամ բարձրագույն մանկավարժական կրթություն և նախադպրոցական մանկավարժության, հոգեբանության և ուսումնամեթոդական հմտություններ ապահովող առնվազն 20 կրեդիտ։

Դիմող քաղաքացիները թիվ 5 «Գարուն» մանկապարտեզ ՀՈԱԿ են ներկայացնում հետևյալ փաստաթղթերը.

1) դիմում (Ձև 1),
2) կրթության մասին փաստաթուղթ (դիպլոմ),
3) անձը հաստատող փաստաթուղթ,
4) աշխատանքային ստաժի վերաբերյալ տեղեկանք կամ աշխատանքային գրքույկ (առկայության դեպքում),
5) ինքնակենսագրություն (Ձև 4),
6) մեկ լուսանկար՝ 3x4 չափի,
7) այլ պետությունների քաղաքացիները Հայաստանի Հանրապետությունում աշխատելու իրավունքը հավաստող փաստաթուղթ,
8) հրատարակված հոդվածների ցանկ կամ գիտական կոչումը հավաստող փաստաթղթեր (դրանց առկայության դեպքում)։

Փաստաթղթերն ընդունվում են 2026թ. նոյեմբերի 9-ից մինչև դեկտեմբերի 4-ը ներառյալ, յուրաքանչյուր աշխատանքային օր ժամը 09:00-ից 17:00։

Մրցույթը կկայանա 2026 թվականի դեկտեմբերի 10-ին ժամը 11:00-ին Վաղարշապատի համայնքապետարանի թիվ 5 «Գարուն» մանկապարտեզ ՀՈԱԿ-ում, հասցե՝ ք. Էջմիածին, Չարենց 8/1:

Տեղեկությունների համար զանգահարել 094-99-24-03 հեռախոսահամարով, էլ. հասցե՝ tiv5garun@mail.ru: